ԲՈՒՀ-ԴԻՄՈՐԴ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ 2

- Ապառնակը, ինդիրները, շահառուների ընտրանքը և ընտրանքի ձևավորման սկզբունքները

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ 3

ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ 4

- Հանդիպում ZOOM հարթակում 5
- Օնլայն հանդիպումների ընթացքում դիմորդների կողմից հաճախ կրկնվող հարցադրումներ 5

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 6

- Փոխ ունքների վերլուծություն 6
- Եզրակացություններ և առաջարկներ 8
- Կատարողականի ազդեցությունը ՄՈՒՀ–ի գործընթացներում 10
- Կատարողականի ազդեցության էվոլյուցիոն ալիք 10

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄ 10

ԱՄՓՈՓՈՒՄ

ԲՈՒՀ-ԴԻՄՈՂ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ 2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ

Հյուսիսային համալսարանը (այսուհետ՝ Համալսարան), շարունակելով արտաքին շահակիցների հետ (մասնավորապես՝ կրթական հաստատությունների) փոխհարաբերությունների սերտացման գործընթացները, 2020-2021 ուստարում մեկնարկել է նոր ձևաչափով և առավել համակարգված մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ, որոնք ամրագրված են Համալսարանի՝ 2020-2025թթ. ՌԾ-ում:

Նպատակը

Համագործակցության նպատակն էր ավարտական դասարաններում սովորող աշակերտների, ինչպես նաև այլ կրթական հաստատություններում ուսումնառողների շրջանում մասնագիտական կողմնորոշման ապահովումը:

Խնդիրները

Շահակիցներին ներկայացնել՝

- ✓ Աշխատաշուկայում մեծ պահանջարկ ունեցող մասնագիտությունները,
- ✓ Համալսարանում ուսուցանվող մասնագիտությունները և դրանց վարձավճարները (այլ համալսարաններում գործող համապատասխան մասնագիտության վարձավճարի համեմատությամբ),
- ✓ Համալսարանի կողմից ուսանողներին ընձեռնած հնարավորությունները (իրավունքներ, պարտականություններ, տրամադրվող զեղչեր, Համալսարանում գործող շարժունության ծրագրերը (Erasmus+) և այլն):

Հանդիպման շահառուների ընտրանքը

Հանդիպման շահառու են հանդիսացել ՀՀ-ում գործող ուսումնական հաստատությունների ավարտական դասարաններում (կուրսերում) սովորող աշակերտները (ուսանողները):

Ընտրանքի ձևավորման սկզբունքները

Թիրախավորվել են մարզային դպրոցներից, մասնավորապես այն դպրոցները, որոնց տարածաշրջանային դիրքով և տրանսպորտի հասանելիությամբ /ժամանակային տևողությամբ/ պայմանավորված՝ շրջանավարտների երևանյան բուհերից օգտվելու հավանականությունը առավել մեծ է: Թիրախային լսարանն ընտրելիս հիմք են ընդունվել նաև պաշտոնական

ֆեյսբուքյան էջի վիճակագրական տվյալները, որտեղ ակներև է, թե որ շրջաններից են առավել հաճախ տեղեկատվություն փնտրում բուհի վերաբերյալ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

Նախապատրաստական աշխատանքներ և փուլերի նկարագիր.

I փուլ.

1. Բուհի մատուցած կրթական ծառայությունների վերաբերյալ ողջ տեղեկատվության թարմացում և համակարգում:
2. Իրազեկվածության նպատակով տեեկատվական թերթիկների (բուկլետների) պատրաստում:
3. Հարցումներ անցկացնելու և հետադարձ կապի մեխանիզմներն ակտիվացնելու նպատակով հարցաթերթերի պատրաստում:
4. Մատուցվող տեղեկատվության վերաբերյալ սահիկահանդեսի պատրաստում:
5. Այցելության ուղիների (կրթական հաստատությունների) հստակեցում և պայմանավորվածությունների ձեռքբերում:
6. Այցերի իրականացման համար համապատասխան խմբերի ձևավորում:
7. Գործուղումների իրականացում:

II փուլ[1].

8.Յուրաքանչյուր մասնագիտության վերաբերյալ սահիկահանդեսի միջոցով տեղեկատվական փաթեթի պատրաստում՝ համապատասխան ամբիոնների կողմից:

9.Հանդիպումների մասին տեղեկատվության հրապարակում[2]:

10.Հանդիպումների իրականացում:



[1] https://www.facebook.com/hyusis.hamalsaran/photos/a.948519398656535/1463883447120125/
https://www.facebook.com/hyusis.hamalsaran/photos/a.948519398656535/1466333423541794/
https://www.facebook.com/hyusis.hamalsaran/photos/1463883447120125
https://www.facebook.com/hyusis.hamalsaran/photos/a.948519398656535/1469706129871190/

[2] https://northern.am/index.php/hy/news/449-qarozarshav
https://northern.am/index.php/hy/news/460-hayrenaser

ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԵՐԸ[4]

- Թաիրովի միջն. դպրոց
- Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջն. դպրոց
- Մուսալեռի Ֆր. Վերֆելի դպրոց
- Ամբերդի միջն. դպրոց
- Ա.Նակորյանի միջն. դպրոց
- Աքորու միջնակարգ դպրոց
- Բամբակաշատի միջն. դպրոց
- Գողթի միջն. դպրոց
- Դալարիկի Հ.Հ. անվ.միջն. դպրոց

- Լեռնագոգի Օնիկ Փակումեանի միջ. դպրոց
- Լուկաշինի Հ.Ավետիսյանի անվան դպրոց
- Խանջյանի միջն. դպրոց
- Հ.Նավասարդյանի դպրոց
- Հունան Ավետիսյանի անվ. դպրոց
- Մյասնիկյան Արայի անվ. դպրոց
- Նարեկացու անվ.2-րդ դպրոց
- Նորավանի միջն. դպրոց
- Ռ.Եղոյանի 1-ին ավագ դպրոց
- Ֆր.Վերֆելի անվան միջն. դպրոց

- Ալավերդու[5] արհեստագործական պետական ուսումնարան
- Ալավերդու Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց
- Ալավերդու Չարենցի անվան միջնակարգ դպրոց
- Ալավերդու Սպանդարյանի անվան թիվ 1 հիմնական դպրոց,
- Ալավերդու Սայաթ-Նովայի անվան թիվ 8 ավագ դպրոց

[4] https://m.facebook.com/story.php?story_fbid=326854005681075&id=100050694332450
https://m.facebook.com/story.php?story_fbid=308541494178993&id=100050694332450
https://m.facebook.com/story.php?story_fbid=309463924086750&id=100050694332450

[5] https://www.facebook.com/anahit.mukuchyan/posts/4060123134072898
https://www.facebook.com/anahit.mukuchyan/posts/4017495755002303

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ
Հանդիպումներ «ZOOM» հարթակում



Համագործակցության վերջին փուլում, օնլայն՝ Zoom հարթակի միջոցով, կազմակերպվել է առցանց բաց դռների օր՝ աշակերտների/ապագա դիմորդների համար, որի ընթացքում նրանց հնարավորություն է ընձեռվել հանդիպել յուրաքանչյուր մասնագիտության անմիջական ներկայացուցիչների՝ համապատասխան ամբիոնների վարիչների, դեկանների և շարժունության ծրագրերի (Erasmus+) կազմակերպչի հետ: Ապագա դիմորդները նրանց ուղղել են իրենց հետաքրքրող հարցերը՝ ուսումնական գործընթացի, մասնագիտությունների, համալսարանական առօրյայի և մասնագիտական կողմնորոշմանը նպաստող այլ հարցերի վերաբերյալ:

Օնլայն հանդիպումների ընթացքում դիմորդների կողմից հաճախ կրկնվող հարցադրումներ

- ՄՈՒՀ-ի կողմից տրամադրվող ավարտական փաստաթղթի՝ դիպլոմի պետական կարգավիճակ ունենալու հանգամանքը:
- Առկա և հեռակա համակարգերում կրթության որակական տարբերությունները:
- Շրջանավարտների մասնագիտական որակները հավաստող առավել ընդգրկուն հիմքեր:
- Կարիերայի կենտրոնի գործունեության վերաբերյալ հարցադրումներ (որքանով է կենտրոնը ցուցաբերում աջակցություն աշխատանքի ընդունման գործընթացներում):
- Լաբորատոր պայմանների առկայության, գույքային հագեցվածության և վերջիններիս հասանելիության վերաբերյալ[7]:
- Պրակտիկայի վայրերի, կազմակերպման հաճախականության վերաբերյալ:
- Պրակտիկայից հետո մասնագիտական աշխատանքը շարունակելու համատեղելիությունը ուսումնական գործընթացի հետ:

[7] Մտահոգության հիմքում այն հանգամանքն էր, որ որոշ բուհերում ուսումնառող իրենց հարազատները, ավարտական կուրսերում լինելով հանդերձ, հնարավորություն չեն ունեցել ուսուցման ընթացքում օգտվել իրենց մասնագիտություններին համապատասխան լաբորատոր պայմաններից:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ, ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գծապատկեր 1.



Գծապատկերը մեջբերված է ԲՈՒՀ-դիմորդ համագործակցության շրջանակում 2020-2021 ուսումնական կրթական հաստատություններում իրականացված այցերի հարցման արդյունքներից:

Հարցման պատասխաններից տոկոսային հարաբերակցությամբ դեռևս չեն կողմնորոշվել մասնակիցների 10%–ը, իսկ մասնագիտություններից նախընտրելի են՝

9%՝ ծրագրավորող 5%՝ կառավարում

9%՝ թարգմանիչ 5%՝ մանկավարժ

Ըստ վերլուծության՝ Համալսարանում առկա բաժինները համապատասխանում են դիմորդների կողմից նախընտրելի մասնագիտություններին:

Գծապատկեր 2.



Գծապատկեր 3.



Գծապատկեր 4.


Տեղեկատվական ի՞նչ աղբյուրներից եք իրազեկվել Հյուսիսային համալսարանի մասին
1.Ֆեյսբուք սոցիալական ցանցից
2.Գովազդային բուկլետներից
3.Տեղեկատվական թերթիկներից
4.Թեմատիկ պաստառներից
5.Բուհի վերաբերյալ գովազդային հոլովակներից
6. Համալսարանի northern.am կայքից
7.Բուհի շրջանավարտներից կամ ուսանողներից
8.Բուհի աշխատակիցներից
9.Դպրոցում կատարված մասնագիտական կողմնորոշման հանդիպումից
10.Այլ տարբերակ
39%
3%
26%
12%
5%
0%
8%

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Առաջարկի հիմք հանդիսացող աղբյուրին վերադառնալու համար *(click)՝* *նշանին*

Հանդիպումների ընթացքում շահակիցները ստացել են անհրաժեշտ տեղեկատվություն բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունների և ՀՀ-ում գործող՝ հավատարմագրված ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Հյուսիսային համալսարանում իրականացվող կրթական ծառայությունների, ինչպես նաև աշխատաշուկայի և ընձեռվող հնարավորությունների վերաբերյալ:

ԲՈՒՀ-դպրոց կապն ամրապնդելու և դիմորդներին անհրաժեշտ խորհրդատվություն տրամադրելու նպատակով նման հանդիպումները կարևոր են և արդիական, մասնավորապես ընդունելություններին նախապատրաստվող դպրոցականների համար և օգնում են կողմնորոշվելու մասնագիտությունների և համապատասխան հաստատությունների ընտրության հարցում, ինչպես նաև նպաստում են դպրոց-բուհ հարաբերությունների սերտացմանը:փ

Մասնագիտական կողմնորոշման միջոցառումները առավել արդյունավետ կազմակերպելու և ամբողջությամբ ներդնելու համար կարևորվում է կրթական հաստատությունների և դիմորդների հետ համագործակցությունների տարաբևեռ ձևաչափերի կիրառությունը, որոնք բխում են Համալսարանի ռազմավարական առաջնահերթ նպատակներից և պլանավորվում ու իրականացվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա համար՝ շարունակական բարելավումներով:

Ապագա դիմորդների մասնագիտական ընդունակությունների բացահայտման և մասնագիտության ճիշտ ընտրությանը նպաստելու նպատակով գործընթացները կարող են համալրվել (հիմք ընդունելով համապատասխան ուսումնական տարվա նպատակահարմարությունը). Օրինակ, կազմակերպել՝

- *դպրոցականների առարկայական օլիմպիադաներ,*
- *պարբերաբար կազմակերպվող շարադրությունների և լուսանկարչական աշխատանքների մրցույթներ,*
- *հայկական և արտասահմանյան պոեզիայի ասմունքի մրցույթներ,*
- *«Ֆակուլտետային օրեր»,*
- *«Մասնագիտությունների տոնավաճառ»,*
- *բաց դռների օր՝ծնողների և դիմորդների համար,*
- *բաց դասեր, դիտարժան փորձերի ցուցադրում, վարպետության դասեր,*
- *համագործակցությունների փոխշահավետ առաջարկ՝ ԲՈՒՀ-դպրոց կապի ամրապնդման նպատակով,*

  - ***Հիմք ընդունելով՝*** կայացված հանդիպումների ընթացքում շահակիցների մեծամասնության՝ իրենց ապագա մասնագիտության հարցում կողմնորոշված լինելու հանգամանքը, առաջարկում ենք՝ (տես գծապատկեր 2)՝

    - մասնագիտական կողմնորոշման միջոցառումների կազմակերպման ժամանակացույցի վերանայում՝ միջոցառումները մեկնարկել նախորդ ժամանակացույցից առնվազն 2 ամիս շուտ,
    - ընտրանքային խմբի վերանայում.առավել ցածր տարիքային խմբերի ներգրավում (դպրոցների 10-11-րդ դասարաններ և քոլեջների 2-րդ կուրսեր):

- ***Հիմք ընդունելով***՝ մասնագիտական կողմնորոշման միջոցառումների շրջանակում ՄՈՒՀ հաճախած ուսանողների թվակազմը՝ առաջարկում ենք (տես գծապատկեր 3)՝
  - պահպանել համագործակցությունների շարունակականությունը, սերտացնելով գործնական հարաբերությունները կրթական հաստատությունների տնօրենների և առանցքային ներկայացուցիչների հետ, որպես հետադարձ կապի հիմք. *Օրինակ՝ մասնագիտական խնդիրների լուծման անհրաժեշտությունից ելնելով՝ նաև ուսուցիչների մասնակցությամբ կազմակերպվող սեմինարները, կլոր սեղանները:*

- ***Հիմք ընդունելով***՝ հանդիպումների ընթացքում դիմորդների նախասիրությունները լրացուցիչ կրթության նկատմամբ (տես՝ գծապատկեր 4) առաջարկում ենք՝
  - վերանայել լրացուցիչ կրթության առարկայացանկը ներդնելով՝ արդիական պահանջներին համապատասխան ուղղությունները՝ թուրքերենի/ադրբեջաներենի, կամ կորեերենի դասընթացներ:

- ***Հիմք ընդունելով***՝ կայացած հանդիպումների ընթացքում շահակիցների կողմից ցուցաբերված հետաքրքրությունները որակյալ կրթության և համապատասխան պայմանների նկատմամբ առաջարկում ենք՝
  - հաջորդ տարվա մասնագիտական կողմնորոշման հանդիպումների երկրորդ փուլի շրջանակում՝ ուսանողների ոլորտային մասնագետների հետ քննարկում- հանդիպումները կազմակերպել նաև առկա տարբերակով (հաշվի առնելով տվյալ ժամանակահատվածում երկրում տիրող ֆորսմաժորային իրավիճակները /պանդեմիա, պատերազմական իրավիճակ և այլն/),
  - ապահովել համագործակցությունների շարունակականություն. *օրինակ՝ հաջորդ ուստարվանից դիմորդների համար մեկնարկել բուհական քննությունների նախապատրաստական դասընթացներ*:

Առաջարկներ, որոնք բխում են համապատասխան հարցադրումներից

- Համապատասխան թիրախավոր խմբերին հնարավորություն ընձեռել ընդգրկվելու Որակի մշակույթի տարածման նպատակով իրականացվող միջոցառումներին:
- Կայացվող հանդիպումներում ներկայացնել առկա/հեռակա համակարգերի բովանդակային նույնությունը և ժամային տարբերությունը:
- Ձեռնարկել միջոցառումներ՝ շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվության առավել մեծ հնչեղությամբ հրապարակայնացնելու ուղղությամբ:
- Կարիերայի կենտրոնի գործունեության և պրակտիկաների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնացման նոր մեխանիզմների ընտրություն և ներդնում:
- Ճանաչողական այցեր իրականացնել Հյուսիսային համալսարան, հնարավորություն ընձեռելով ծանոթանալ առկա ռեսուրսներին՝ լաբորատոր պայմանների հագեցվածությանը, ինչպես նաև ներգրավվել որոշակի բաց դասերի:

Կատարողականի ազդեցությունը ՄՈՒՀ–ի գործընթացներում

Միջոցառումներին հաջորդող ուսումնական տարվա՝ 2021-2022թթ. 1–ին կուրսի ուսանողների հետ իրականացված հարցման արդյունքում տեսանելի դարձավ, որ փաստացի ուսանողների շարքում 6 ուսանող ՄՈՒՀ–ի մասին տեղեկատվություն ստացել է վերոնշյալ միջոցառումների շրջանակում: Առաջիկա ուսումնական տարիների ընթացքում նույնպես ակնկալվում են սույն միջոցառումների շրջանակում ընդգրկված դիմորդների հոսք:

Կատարողականի ազդեցության էվոլյուցիոն ալիք

Վերլուծությունների արդյունքում ներկայացված բոլոր առաջարկությունները նպատակաուղղված են՝



ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱԶՄ

Միջոցառումները համակարգվել և իրականացվել են Համալսարանի ՈԱ վարչության, Լրատվության և հասարակայնության հետ կապերի ուսումնապրակտիկ կենտրոնի և Ալավերդու բաժանմունքի համագործակցությամբ, ներգրավելով այլ ներքին շահակիցների (ամբիոնների և ուսանողական հանձնաժողովների ներկայացուցիչներ և այլ աշխատակիցներ):

Որակի ապահովման վարչություն